# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՐՏԻ 2018թվականի N 13

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի և ղեկավարվելով Զովաբեր համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ ենթակետի 2-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի ավագանու 2018թվականի մարտի 14-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝ հետևյալ հարցերով
   1) Պարտավորություն ստանձնելու մասին:
   2) Զովաբերի համայնքապետարանում անասնաբույժի հաստիք նախատեսելու մասին:
   3) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի բնակիչներին գույքահարկի գծով արտոնություն տալու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՐՏԻ 2018թվականի N 14

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀայաստանիՀանրապետության «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 14-րդ և 16-րդհոդվածներիհամաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Զովաբեր համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 15

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԶՈՎԱԲԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ>> 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային և զարգացման նախարարի հանձնարականը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի նամակը և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 09.02.2018թ. N02/03/672-18 գրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբերի գյուղապետարանի աշխատակազմի և «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանում 2018թ. համար>> 2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 40 որոշման 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը

Ավելացնել նոր 11-րդ կետ և այն շարադրել՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) | Դրույքաչափի հարաբերությունը համ.ղեկա վ.հետ |
|---|---|---|---|---|
| 11 | Համայնքի անասնաբույժ | 1 | 95000 | 28.74% |

2. Աշխատավարձը համաձայն սահմանված դրույքաչափի:
3. Զովաբեր համայնքի ղեկավարին և աշխատակազմին - 2018 թվականի մարտի 14-ից առաջնորդվել սույն որոշմամբ հաստատված հաստիքացուցակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Զովաբեր համայնքի ներքոհիշյալ ֆիզիկական անձին պատկանող ավտոմեքենայի գույքահարկի գծով տալ արտոնություն նշված գումարի չափով.

1) Հակոբ Պողոսյան – HOWO SINOTRUK – 34PN750 – 15000 /տասնհինգ հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**